

# 2026-2028

# 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԺԾԾ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԻ

# ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

# 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

**Պետական մարմինը՝** ՀՀ ԿԵՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Հայտի հաստատման ամսաթիվը՝** **03.03.2024թ.**

## 1. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Ծրագիր- **1096 - Ընտրական գործընթացների համակարգում, կանոնակարգում և տեղեկատվության տրամադրում**

Ծրագրի նպատակը- **Օրինական և թափանցիկ ընտրական գործընթացների կազմակերպում և ապահովում**

Վերջնական արդյունքի նկարագրությունը- **Ընտրական գործընթացների նկատմամբ հանրային վստահության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը սահմանադրական կարգավիճակով օժտված անկախ պետական մարմին է, որը կազմակերպում է Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, հանրաքվեները, ինչպես նաև վերահսկողություն է իրականացնում դրանց օրինականության նկատմամբ: Հանձնաժողովի աշխատանքներն ուղղված են ընտրական գործընթացների պատշաճ կազմակերպմանն ու անցկացմանը, դրանց բարելավմանն ու կատարելագործմանը, ընտրական իրավունքի և ընտրական գործընթացների վերաբերյալ ուսուցումների և դասընթացների կազմակերպմանը, դասավանդման նոր մեթոդաբանության, ուսուցման նոր հարթակների մշակմանն ու ներդրմանը և ընտրական գործընթացների վերաբերյալ հանրային իրազեկման ապահովմանն ու ընդլայնմանը: Հանձմաժողովը իրականցնում է Ընտրական գործընթացների համակարգում, նախապատրաստում, հաշվետվական համակարգի կազմակերպում, վերլուծություն, ընտրական պաշտոնների վերապատրաստում,քաղաքացիների դիմումների և բողոքների քննարկում: Հանձնաժողովը անդամակցում է Համաշխարհային ընտրական մարմինների ասոցիացիա՝A-WEB-ը(Association of World Election Bodies) կազմակերպությանը:Իակ 2025թ.-ից անդամակցում է ՝Կանայք ընտրական վարչարարության մարմիններում՝-WEM-ը (Women in Electoral Management-International) միջազգային կազմակերպությանը: Հանձմաժողովը իրականցնում է մասնագիտական խորհրդատվության տրամադրում զանգվածային լրատվության միջոցներին, հասարակական կազմակերպություններին իրենց իրավունքների իրականացման հասանելիության ապահովման նպատակով; Համագործակցում է միջազգային կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների շրջանում ընտրական գործընթացների վարչարարության վերաբերյալ հարցումների իրականացմանը:

Կապը ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների և ցուցանիշների հետ ՝

ԿԶՆ 16.7 Ապահովել որոշումների կայացման արձագանքող, ներառական, մասնակցային և ներկայացուցչական գործընթաց բոլոր մակարդակներում:

## 2. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար՝ (ըստ գերակայությունների նվազման)

Միջոցառման անվանումը՝

**11001- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեության ապահովում և ընտրական ծրագրերի համակարգման, կազմակերպման, անցկացման, մոնիտորինգի ծառայություններ**

**11003- Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպում**

**11004- Ազգային ժողովի հերթական ընտրությունների կազմակերպում**

**11009- Երևանի ավագանու ընտրությունների կազմակերպում**

**11002- Ընտրական հանձնաժողովների անդամների մասնագիտական դասընթացների կազմակերպում**

**31005- ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի շենքային պայմանների բարելաւում**

## 3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

### 3.1. Գոյություն ունեցող ծախսային պարտավորություններ և բազային բյուջեի գնահատում

Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունների ապահովման համար իրականացվում են վերլուծություններ, ուսումնասիրություններ, կազմակերպվում են Հանձնաժողովի անդամների և Հանձնաժողովի աշխատակիցների վերապատրաստումներ, անցկացվում են սեմինարներ, կոնֆերանսներ, ապահովվում են շփումներ շահագրգիռ մասնակիցների հետ (կուսակցությունների ներկայացուցիչներ, հասարակական կազմակերպություններ, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ, տարածքային ընտրական հանձնաժողովներ և այլն): Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ընտրական ծրագրերի համակարգման, նախապատրաստման, հաշվետվական համակարգի կազմակերպման, մոնիտորինգի ծառայությունների ապահովման նպատակով ներկայացրել է՝

**1096 -ծրագիր- Ընտրական գործընթացների համակարգում, կանոնակարգում և տեղեկատվության տրամադրում**

11001-միջոցառում- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեության ապահովում և ընտրական ծրագրերի համակարգման, կազմակերպման, անցկացման, մոնիտորինգի ծառայություններ

2024թ.-ին այս միջոցառման մասով փաստացի ծախսեր կազմում է 469957.2 հազար դրամ:

2025թ.-ին այս միջոցառման մասով անհրաժեշտ հատկացումը կազմում է 473127.8 հազար դրամ:

2026թ.-ին անհրաժեշտ հատկացումը հաշվարկվել է 510800.0 հազար դրամ,

2027թ.-ին անհրաժեշտ հատկացումը հաշվարկվել է 528100.0 հազար դրամ,

2028թ.-ին անհրաժեշտ հատկացումը հաշվարկվել է 530100.0 հազար դրամ:

11003- միջոցառում- Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպում

2024թ.-ին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպման, անցկացման և արդյունքների ամփոփման ծառայությունների ապահովման համար փաստացի ծախսերը կազմել է 19880.4 հազար դրամ:

2025թ. ընտրությունների կազմակերպման համար հատկացում չունենք:

2026թ. ընտրությունների կազմակերպման համար անհրաժեշտ հատկացումը հաշվարկվել է 2776369.0 հազար դրամ:

2027թ. ընտրությունների կազմակերպման համար անհրաժեշտ հատկացումը հաշվարկվել է 814984.3 հազար դրամ:

2028թ. ընտրությունների կազմակերպման համար անհրաժեշտ հատկացումը հաշվարկվել է 193190.4 հազար դրամ:

11004- միջոցառում- Ազգային ժողովի հերթական ընտրությունների կազմակերպում

2026թ.-ի Ազգային ժողովի հերթական ընտրությունների կազմակերպման, անցկացման և արդյունքների ամփոփման ծառայությունների ապահովման նպատակով նախնական հաշվարկներով անհրաժեշտ հատկացումը կազմում է 4517952.9 հազար դրամ:

11009- միջոցառում- Երևանի ավագանու ընտրությունների կազմակերպում

2028թ. **Երևանի ավագանու** հերթական ընտրությունների կազմակերպման, անցկացման և արդյունքների ամփոփման ծառայությունների ապահովման նպատակով նախնական հաշվարկներով անհրաժեշտ հատկացումը կազմում է 1320489.3 հազար դրամ:

11002- միջոցառում- Ընտրական հանձնաժողովների անդամների մասնագիտական դասընթացների կազմակերպում

2024թ.-ի փաստացի ծախսը կազմում է 20052.8 հազար դրամ:

2025թ. մասնագիտական դասընթացների կազմակերպման համար անհրաժեշտ հատկացումը կազմում է 19617.1 հազար դրամ:

ՈՒստի 2025թ.-ին ուսուցման ծրագրերի մի մասը իրականացնել չի հաջողվի՝ գումարի սղության պատճառով: Հաշվի առնելով այս հանգամանքը ներկայացնում ենք՝

2026թ. մասնագիտական դասընթացների կազմակերպման համարանհրաժեշտ հատկացումը կազմում է 58851.3 հազար դրամ:

2027թ. մասնագիտական դասընթացների կազմակերպման համարանհրաժեշտ հատկացումը կազմում է 58851.3 հազար դրամ:

2028թ. մասնագիտական դասընթացների կազմակերպման համարանհրաժեշտ հատկացումը կազմում է 58851.3 հազար դրամ:

31002-- միջոցառում- ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի շենքային պայմանների բարելավում

2024թ. այս միջոցառման համար հատկացումը կազմել է 463100.0 հազար դրամ: 2024թ.-ին այս միջոցառման մասով փաստացի ծախսեր կազմում է 23810.0 հազար դրամ: 439290.0 հազար դրամ չօգտագործված մնացորդը վերադարձվել է պետ բյուջե:

Նշված միջոցառման շրջանակներում 20.06.2024 թվականին կենտրոնական ընտրական հանձնաժողովը ստացել է Նախագծահետազոտական փաթեթը, որից հետո դիմել ենք համապատասխան մասնագիտական փորձաքննություն իրականացնող մարմիններին և կազմակերպություններին՝ եզրակացություններ ստանալու համար և Երևանի քաղաքապետարանին՝ որոշում ստանալու համար:

23.09.2024 թվականին Երևանի քաղաքապետարանից ստացել ենք ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

18.12.2024 թվականին Երևանի քաղաքապետարանից ստացել ենք շինարարության թույլատվությունը:

07.01.2025 թվականին մասնագիտական կազմակերպության կողմից ստացել ենք նաև փորձաքննության եզրակացությունը:

Նախագծի փաթեթի վերջնական հաշվարկված արժեքը, հաստատումից հետո՝ կազմել է 792,957.30 հազար դրամ:

Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման, հիմնանորոգման աշխատանքները նախատեսված է կատարել 2026-27 թթ.-ներ:

Ելնելով վերը նշվածից այս միջոցառման համար՝

2026թ.-ին անհրաժեշտ հատկացումը հաշվարկվել է 237887.2 հազար դրամ՝ գումարի 30 տոկոսը:

2027թ.-ին հատկացումը հաշվարկվել է 555070.1 հազար դրամ:

Ելնելով վերը նշվածից այս միջոցառումը որպես նոր նախաձեռնություն չենք ներկայացնում:

***2. Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունների գծով ծախսային խնայողությունների ուղղությամբ առաջարկների ներկայացում***

## 3.2. Նոր նախաձեռնություններ

## 3.3. Պարտադիր և հայեցողական ծախսերը

***Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ***

**11001 - Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեության ապահովում և ընտրական ծրագրերի համակարգման, կազմակերպման, անցկացման, մոնիտորինգի ծառայություններ**

**11003 - Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպում**

**11004 - Ազգային ժողովի հերթական ընտրությունների կազմակերպում**

**11009- Երևանի ավագանու ընտրությունների կազմակերպում**

***Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ***

***Շարունակական բնույթի հայեցողական ծախսերին դասվող միջոցառումները:***

**11002 - Ընտրական հանձնաժողովների անդամների մասնագիտական դասընթացների կազմակերպում**

**31001 - ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի շենքային պայմանների բարելավում**

## 3.4 Ծախսերի այլընտրանքային սցենարները

## 4. ՈՉ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

## 5. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

**1096 -ծրագիր- Ընտրական գործընթացների համակարգում, կանոնակարգում և տեղեկատվության տրամադրում –Երևան քաղաք**

*Առաջարկվող ծախսային ծրագրի հատկացումները կներկայացնեք նաև տարածքային (ըստ մարզերի) բացվածքով (սույն ցուցումներին կից՝ Հավելված 5-ում ներկայացված ձևաչափերին համապատասխան), ՀՀ պետական բյուջեն ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվելուց հետո մեկ շաբաթվա ընթացքում:*

## 6. ՄԻՋՈՒՂՈՐՏԱՅԻՆ (ԽԱՉՎՈՂ) ԲՆՈՒՅԹԻ ԱՌԱՆՁԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

## 7. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՍՏԱՑՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

## 8. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

*Ներկայացվում է 2026-2028թթ. ժամանակահատվածի համար պետական մարմնի պատասխանատվության ներքո գտնվող բնագավառ(ներ)ի գծով ֆինանսական պահանջների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը (ներառյալ գոյություն ունեցող պարտավորությունները և նոր նախաձեռնությունները)՝ սույն ցուցումներին կից՝ Հավելված 8 –ում ներկայացված ձևաչափին համապատասխան:*

Ընդամենը հայտով ներկայացված ընդհանուր ծախսերը՝ գոյություն ունեցող ծախսային պարտավորությունների գնահատում 2026-2028 թթ. ՄԺԾԾ համար՝

2026թ կազմում է 8101860.4 հազար դրամ:
2027թ. կազմում է 1957005.7 հազար դրամ:
2028թ. կազմում է 2102631.0 հազար դրամ:

## 9. ՀԱՅՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

## 10. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ /ԱՆՁՆԱԳԻՐ/

*Ներկայացնում ենք Բյուջետային ծրագրերի նկարագրերը /անձնագրերը/ Հավելված 13-ում ներկայացված ձևաչափին համապատասխան յուրաքանչյուր միջոցառման մասով:*

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

*Ներկայացվում է՝* Հավելված 1-2, Հավելված 3, Հավելված 8, Հավելված 12, Հավելված 13